

ԲՆԱԳՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ

Բանաս. գիտ. դոկտոր Վ. Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Մեզ հասած հայոց հին գրականության երկերը դարերի ընթացքում ենթարկվել են լեզվական փոփոխությունների, կրել են բազմաթիվ աղավաղումներ: Այդ փոփոխություններն ու աղավաղումները երկու հիմունքով են կատարվել. կամ եղել են խմբագրման արդյունք և կամ հետևանք են ակամա գրչական սխալների: Երիշը իր ձեռքի տակ եղած օրինակը արտագրելիս երբեմն շփոթում է նման տառերը, չհասկացած բառը նմանեցնում է իրեն ծանոթ նույնանման մի բառի և այդ բառը փոխարինում է այս վերջինով. երբեմն էլ ուղղակի սխալ է կարդում և այդ կարդացած սխալանքը անցնում է գրության մեջ: Այս սխալանքները բազմաթիվ արտագրությունների ընթացքում կուտակվում են, շատանում և դառնում են սլատձառ բնագրի շատ նսխադասությունների, հատվածների աղճատման, սխալ հասկացման ու իմաստավորման:

Մեր բանասիրությունը վաղուց որդեգրել է մի գեղեցիկ ավանդույթ: Կարող բանասերները, գրաբարագետները ժամանակի ընթացքում բնագրերը հրատարակելիս և կամ իբրև բանասիրական կարևոր աշխատանք ուսումնասիրել են հիշյալ աղճատումներն ու աղավաղումները և մատնանշել ճիշտ ընթերցվածները: Այս աշխատանքը որոշ բնագրերի վերաբերմամբ կատարվել է սովելի մանրամասն ու ավելի հետևողական, երբեմն էլ դա ունեցել է սասնակի թողցիկ բնույթ, այսինքն՝ բանասերը պատահաբար նկատել է սխալը և այս կամ այն առիթով մատնացույց արել:

Այդպիսի բանասերներից ու հայագետներից առանձնապես նշելի են Նորայր Բյուզանդացու և Հր. Աճառյանի անունները, որոնք հասուկ զբաղվել են գրաբար բնագրերի ուղղման ու սրբագրման հարցերով և իրենց այդ հույժ կարևոր հիտական աշխատանքների արդյունքները հրատարակել են առանձին գրքույկներով, հոդվածներով: Նորայր Բյուզանդացու ձեռագիր ժառանգության մեջ մեզ է հասել «Նախնիք» վերնագրով մի ընդարձակ աշխատասիրություն, որը նվիրված է հայ հին գրականության բնագրերի աղճատումների ու աղավաղումների ճշտմանն ու սրբագրությանը, որքան որ հեղինակը նկատել է: Երկայումս մեր բանասիրության այս շատ կարևոր բնագավառի աշխատանքը դարձել է առել. գոնե մեզանում բնագրերի ուղղման ու ճշտման աշխատանքներով զբաղվողներ այժմ չկան: Նույնիսկ այն բնագրերը, որոնք անցել են Նորայր Բյուզանդացու, Աճառյանի քննությունների բովից, դարձյալ կարիք ունեն ուղղման ու սրբագրության, որովհետև բազմաթիվ սերունդների բաց թողած սխալանքները կուղղվեն միայն նույնքան սերունդների ջանքերով ու գիտական պրպսումներով: Սխալները կատարված են շատ դյուրությամբ, աննկատելի, առանց ձիգ ու ջանքի, իսկ դրանց ճշտումը, վերականգնումը պահանջում են հմտություն, գիտական ձիգ ու ջանք և խորամտություն, այլապես հոնքը շինելու փոխարեն կարող է աչքը հսկվել:

Պետք է խոստովանենք, որ մենք նույնպես առանձնահատուկ կերպով չենք զբաղվել հիշյալ ավանդույթով: Իրերի բերումով ձեռնարկել ենք Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի թարգմանությանը և ահա այս ընթացքում նկատված թերույթները մատնացույց ենք անում՝ չհավակնելով երբեք դրանց անսխալությանը: Կարևոր ենք համարում ուշադրություն հրավիրել մեր բանասիրության այս հետաքրքրական ճյուղի վրա և նպաստել բնագրերի վերականգնման ու ճշման աշխատանքներին: Մեր սույն հոդվածը սկսում ենք Կիրակոս Գանձակեցու նրկով, մի երկ, որ անցել է հիշատակված երկու հռչակավոր գիտնականների քննության բովից:

Բնավ այն կարծիքին չենք, թե մեր քննությամբ սպառվում են Կիրակոս Գանձակեցու երկի աղճատումներն ու աղավաղումները: Պարզապես ցանկանում ենք մեր գիտողությունները հայ բանասիրության քննությանը ներկայացնել ավելի ստուգվելու նկատառումներով:

Այս ուղղումները երկու բնույթ ունեն՝ բնագրի վերականգնում և տարբերակների ու բնօրինակի առնչություն: Կրկնություններից խուսափելու համար այս երկու բնույթի ուղղումները միասնաբար ենք ներկայացնում: Թարգմանության ու քննության բնագիրը ակադեմիկոս Կարո Մելիք-Փհանջանյանի աշխատասիրած՝ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոցի» բաղդատական հրատարակությունն է¹:

էջ 4, տող 16-ում «Եւ այսոցիկ, որք յօժանդակ են և ձեռն տան, յոլովք և յաստուածայնոց արանց...»

Այսոցիկ ձեռ ըստ տարբերակների պետք է ուղղել յայսոսիկ, իսկ յօժանդակ են իմաստազուրկ է, ճիշտն է օժանդակեն, այսինքն՝ օգնում են: Այս ճշտումը հուշվում է հաջորդ ձեռն տան հարադրությամբ, որ նախորդի համանիշն է:

էջ 28, տող 16. «Եւ Կորիւն զՊատմութիւն սրբոյն Մեսրոպայ և այլ ժամանակաց». այսինքն՝ «Կորյունը գրեց սուրբ Մեսրոպի և այլ ժամանակների պատմությունը»: Ժամանակաց բառը պետք է ուղղել՝ ժամանակակցաց: Կորյունը այլ ժամանակների պատմություն չի գրել. Մեսրոպի հետ հիշատակել է նրա ժամանակակիցներին: Ժամանակակից բառը իր այսօրվա նշանակությամբ, դասական գրաբարի շրջանից սկսած կենդանի ու գործածական բառ է մինչև այժմ:

էջ 50, տող 1. «Իսկ Մօրիկ իբրև լուաւ, ծիծաղեցաւ և ոչինչ յայտնեաց, և կալեալ զմեծամեծսն, զորս կարծէր, թե սատան են թագաւորութեան նորա, երարձ զամենեսեան, զի մի դաւ ինչ լիցի թագաւորութեան, և զփոքունսն ի տեղիս նոցա կարգեալ»:

Այս հատվածում սատան բառը ուղղում ենք սատար: Իրողությունը հետևյալն է. Մորիկը մարդիկ է ուղարկում իր գյուղացի հոր մոտ և թագավորությունը ճիշտ կառավարելու համար խորհուրդ է խնդրում: Հայրը մտնում է բանջարանոցը և պատվիրակների առջև առանց որևէ խոսքի մեծ կաղամբները ոչնչացնում է, իսկ փոքրերը խնամում: Պատվիրակները գյուղացուն խենթ կարծելով՝ վերադառնում են, Մորիկին հայտնում տեսածը: Մորիկը հասկանում է հոր արարքի նշանակությունը: Պատմիչը ասում է. «Եւ քոնեց մեծամեծներին,

¹ Կ Ի ր ա կ ո ս Գ ան ձ ա կ ե ց ի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Փհանջանյանի, Երևան, 1961.

որոնց (մինչև այդ) կարծում էր, թե իր թագավորությանը սառար են (հենարան, օգտակար, նպաստող և այլն), բոլորին վերացրեց, որպեսզի դավադիր չլինեն իր թագավորության համար, նրանց փոխարեն փոքրերին նշանակեց»:

Նշելու արժանի է, որ սատան բառը կա գործածված մեր մատենագրության մեջ, և բառարանները այն բացատրում են «հակառակորդ, թագավորի դեմ ապստամբ իշխան, շարափառ, մատնիչ»: Այս բոլորը ճիշտ է: Հիշյալ նշանակությամբ այդ բառը երեք անգամ Աստվածաշնչում է կիրառված: Մենք կարծում ենք, որ այդպիսի կիրառումն է պատճառ դարձել Գանձակեցու այդ տողում բառի հայտնվելուն: Որևէ գրիչ իմանալով այդ բառը՝ սատար-ը փոխել է սատան-ով: Չէ՞ որ մինչև պատգամաբերների Հայաստանից վերադառնալը Մորիկը երբեք չէր մտածել, որ ավագանին ու մեծամեծները թշնամի են իր պետությանը, բայց բնագրում ասված է «Զորս կարծէր, թէ սատան են թագաւորութեան նորա», մի բան, որ երբեք չէր կարծել, եթե, իհարկե, կարծէր անցյալ անկատարը կատարյալ չհասկանանք:

Այս ուղղումը առաջարկում ենք, սակայն թարգմանությունը կատարում ենք ըստ սատան բառի:

Էջ 63, տող 9. «Հիւանդացաւ հիւանդութիւն, ու մեռաւ իսկ»: Ուր-ը ոչ մի հիմունքով չի առնչվում նախադասության հետ: Ծիշտն է. «Հիւանդացաւ հիւանդութիւն և մեռաւ իսկ»:

Էջ 52, տող 3. «Խոսրով պարսից արքայ... առաքէ և զխոռիան զօրավար իւր ի Պաղեստինէ, որ երթեալ պաշարեաց զսուրբ քաղաքն Երուսաղէմ և առ զնա»: Պաղեստինէ ձևը սխալ է, պետք է լինի Պաղեստին, ինչպես պարզ ցույց է տալիս նախադասության իմաստը: Խոռիան զօրավարը Պարսկաստանից ուղարկվում է Պաղեստին և ոչ թե Պաղեստինից գնում է՝ Երուսաղեմը պաշարում:

Էջ 66, տող 12. «Յորում ժամանակի արձակեցաւ և Վահան Գողթան տէր, որ վկայեաց յաւուրս շահի Հեշմայ»: Այստեղ ակնհայտ աղավաղված է: Արաբական ամիրապետները երբեք շահ չեն կոչվել: Պետք է կարդալ Շամի կամ Շամայ իբրև Շամ հատուկ անվան սեռականը: Տարբերակների մեծ մասը տալիս է Շամայ:

Էջ 75, տող 7. «Եւ յետ վախճանի նորա Իպնդոկլ կողոպտէ զեկեղեցին»: Հասկանալի չէ, թե Իպնդոկլը (հավանորեն պետք է կարդալ Իրն Դոկլի կամ Դակլի, այսինքն՝ Դակլի որդին) ինչ եկեղեցի է կողոպտում. Հայաստանի բոլոր եկեղեցիները, թե մի եկեղեցի: Զեկեղեցին որոշյալ է, ուստի խոսքը մի եկեղեցու մասին է: Սամվել Անեցին համապատասխան տեղում ունի զեկեղեցին ի Դուին, ուստի բնագիրը պետք է ուղղել այդ ձևով:

Էջ 85, տող 13. «Ասէ նոյնպէս և հասարակաց թողուլ, ասէր, զգէսս տղայոց և ոչ հատանել մինչև երկայնասցի և պատ առցէ»: Նախ՝ հասարակաց պետք է լինի զհասակաց, որ ունեն տարբերակները, քանի որ մի տող հետո խոսում է հասակների մասին. («զի վասն այնորիկ, ասէ, կոչի պատանի և ապա կտրել հրամայէր, զի վասն այնորիկ (այստեղ ստորակետը ավելորդ է) կոչի կտրիճ»): Հետո զհասակաց բառից հետո պետք է միջակետ դնել, իսկ մինչև-ից առաջ ստորակետ: «Ասէ նոյնպէս և զհասակաց. թողուլ, ասէր, զգէսս տղայոց և ոչ հատանել, մինչև երկայնասցի և պատ առցէ»: Այս է ճիշտ բնագիրը:

էջ 105, տող 16. «Իսկ ինքն իմաստաբար փաղցրավարութեամբ կարգօ՛ւհանգիւրձէր զամենայն»։ Իմաստաբար բառը պետք է ուղղել իմաստնաբար, իսկ ինչ վերաբերում է փաղցրավարութեամբ կարգօ՛ւ կապակցությանը, ապա առաջին բառը պետք է ուղղել սեռականի ձևով՝ փաղցրավարութեան, կարգօ՛ւ-ը պետք է լինի կարեօ՛ւ, որ ունեն տարբերակները։ Կարեօ՛ւ նշանակում է սիրով։ Նախադասության իմաստն է. «Իսկ ինքն իմաստուն կերպով քաղցր վարվեցողությամբ ու սիրով հոգում էր ամեն ինչ»։

էջ 106, տող 9—10. «Հոսմունս արեանց իբրև զուխից լինէր ոչ միայն զինակիր նահատակաց, այլ և առհասարակ ազանց և զաւառաց»։ Ամենից առաջ, հոսմունս բառը պետք է ուղղել հոսումն, այսինքն՝ եղակի ուղղական. դա պարպապէս թյուրիմաց գրություն է։ Զուխից ձևը կլինի զուղխից։

էջ 114, տող 13. «Ընկէց յերկիր և հաւաւ ի վերայ նորա»։ հաւաւ այստեղ անիմաստ է, պետք է լինի յաւեաւ, որ ունեն մի քանի տարբերակներ։ Նշանակում է՝ «Գցեց գետին և վեր կացաւ նրա վրա»։

Նույն էջում, տող 16. «Մինչև ցայժմ Զոմզոմա էի, իսկ այժմ փոխանակ միոյ նուի բազումս յաւելուս Ստեփաննոս»։ Միոյ նուի անհասկանալի է։ Տարբերակաները ունեն միոյն նուագի, գուցե և այս վերջինն է ճիշտ. այսինքն՝ մի անգամվա փոխարեն շատ անգամ Ստեփանոս ես ավելացնում։ Փոխանակ միոյ նուի, հասկացվում է մի հաւսի փոխառն, որպես թե մի հարսի հետ մոտ լինելու փոխարեն։ Սա անմիտ է, կարծում ենք։

էջ 115, տող 1. «Զի հաներ յեկեղեցւոյ»։ պետք է կարդալ «Զի՝ հաներ յեկեղեցւոյ»։

էջ 127, տող 8. «Զի վնասահօրն ոտից, որ ի ծառն գիտութեան ընթացիցմաքնացէ զյանցանս»։ Պետք է կետադրել և ուղղել այսպես. «Զի զնասահօրն ոտից, որ ի ծառն գիտութեան ընթացի(ն), մաքրեցէ զյանցանս»։

էջ 136, տող 8. «Արդ եթէ այլ ինչ խորհուրդ է բեկուն...» Բեկուն պետք է ուղղել ի բեկուն։

էջ 137, տող 1. «Վասն որոյ թէ ի դէմս երրորդութեանն որ ասիցէ, որպէս դուք, և թէ ի դէմս որդւոյ միայնոյ, որպէս մեք, երկոքեան հաճոյք են Աստուծոյ»։ Միայնոյ ձևը սխալ է և ամբողջ նախադասության իմաստը փոխում է։ Պետք է ուղղել միայն։ Այսպես է Շնորհալու երկում, որ ունեն նաև Գանձակեցու տարբերակները։ Իմաստն է՝ ոչ թե միայնակ որդու համար, այլ միայն որդու համար։

էջ 141, տող 10. Այս տողը ունի «Երբեմն աստուածութեանն» կապակցությունը, որ թյուրիմացաբար է այնտեղ ընկել. հավանորեն սխալմամբ կրկնվել են նախորդ աստուածայինքն և հաջորդ երբեմն բառերը։ Հիշյալ կապակցությունը չունեն Գանձակեցու տարբերակները և ամենակարևորը՝ Շնորհալու բնագիրը։

էջ 142, տող 1. «Դարձեալ և զմարմնոյն յատուկքն է, զի աստուածութեանն տան»։ Կարծում ենք, որ յատուկքն պետք է ուղղել յատուկսն և մանավանդ թե ջնջել ստորակետը, որ իմաստադրկում է նախադասությունը։ Զի նշանակում է երբեմն։

էջ 142, տող 4. «...Զանճառ միութիւնն և զանբաժանելին մի գոլ նշանակեն»։ Մի չունեն Շնորհալու բնագիրը և բաղմաթիվ տարբերակները։ Այն աղավաղում է նախադասության միտքը, ուստի պետք է մաքրել և հաշվի չառնել։

էջ 117, տող 10—11. «Իսկ սքանչելի Հայրապետն Գրիգորիս օր ըստ օրէ յաւելոր ի Բաբեգործութիւն ի պայծառութիւն եկեղեցոյ»: Ի Բաբեգործութիւն կապակցության ի-ն ավելորդ է: Եթէ յաւելոյր չհասկանանք ավելանում էր և ի Բաբեգործութիւն-ն էլ շմտածենք ներգոյական հոլով:

էջ 123, տող 3—4. «Նոյնպէս և որդի, ընդ հօր երգում մշտնջենաւոր»: Եր-դում բառը կատարյալ սխալմունք է այստեղ. պետք է լինի իւրում, շնայած Շնորհալու «Թուղթ ընդհանրականի» համապատասխան տեղը իւրոյ է².

էջ 129, տող 7. «Ջայսոսիկ Աթանասիոս»: Պետք է ուղղել «Ջայսոսիկ ասաց Աթանասիոս», ինչպես ունի Շնորհալին համապատասխան տեղում³:

էջ 133, տող 18. «Քանզի մի Բանին ոչ վասն այլ իրիք ափի ի մէնջ»: Փանին պետք է ուղղել Բնութիւն. դա սխալմունքի արդյունք է: Համեմատիր «Թուղթ ընդհանրականի» հետ, էջ 129:

էջ 135, տող 1. «Եւ ոչ ինչ վնաս հոգևոր տեսին յայսմիկ»: Տեսին սխալ է, պետք է լինի տեսանի:

էջ 140, տող 18—19. «Քրիստոս՝ մարմին համագոյակից մեղ, Բանձրւ մահկանացու, շարշարելի, երկրային, ապականացու և եղանելի, ոչ էառ ի կու-սէն»: Ամենից առաջ Ոչ էառ ի կուսէն կապակցությունից առաջ ստորակետը. ավելորդ է, իսկ էառ, որ նշանակում է առավ, թյուրիմացություն է: Այդտեղ առ-բայ չէ, այլ նախդիր, ուստի պետք է ուղղել ոչ առ ի կուսէն:

էջ 147, տող 13—14. «Եւ էր ինքն հեզ ամենայնիւ և պարկեշտ, արժանաւոր ալրն Աստուծոյ»: Պետք է ուղղել այսպես. «Եւ էր ինքն հեզ, ամենայնիւ (կամ՝ ավելի ճիշտ յամենայնի) և պարկեշտ արժանաւոր ալրն Աստուծոյ»:

էջ 152, տող 5—6. «Եւ յաջորդէ զտեղի հօր իւրոյ Դաւթի, որդի նորա Կիւ-րիկէ. այր բարեբարոյ և կատարեալ ի գործս սուաքինութեան, քաճ. զհարս իւր»: Չհարս պետք է ուղղել զհայրն, ինչպես որ ունեն տարբերակները: Հեղինակը հիշատակում է Կյուրիկէի հայր Դավթին, որդուն էլ համեմատում է նրա հետ և ոչ թե ապուպապերի մասին է խոսքը, որոնց չի ճանաչում Գանձակեցին և որոնց հետ չէր կարող համեմատել Կյուրիկէին:

էջ 168, տող 13—14. «Եւ նորա յանձն առին, զի մի ելցէ նա արտաքոյ ուղղափառ հաւատոյն»: Յանձն առին ուղղում ենք յանձն արարին: Կիւրիկայի լեռն թագավորը հավաքում է վարդապետներին ու եպիսկոպոսներին, որ պա-տասխան տան Ջաքարեի խնդրանքին, իսկ հավաքվածները նամակով հանձնա-րարում են Ջաքարեին, որ նա ուղղափառ հավատի սահմաններից դուրս չգա, և ոչ թե իրենք են հանձն առնում:

էջ 169, տող 1. «Ապա առաքեալս առ քրիստոսապասակ արքայն լեռն»: Խոս-քը վերաբերում է այն թղթին, որ պետք է վարդապետներն ու եպիսկոպոսները գրեին իբրև Ջաքարեի խնդրանքի պատասխան: Պատրաստում են թուղթը և ուղարկում լեռնին, որպեսզի նա պատասխանի Ջաքարեին: Ըստ այդմ առա-քեալս շնիմաստ է, պետք է լինի առաքեցաւ, որ ունի միայն մի ձեռագիր:

էջ 172, տող 7. «Որք սաստիւ հարին զնա բոքք»: Ուղիղն է սաստիկ. որ ունեն տարբերակները և որը ժամանակին առաջարկել է նաև նորայր Բյուզան-դացին⁴:

² Տե՛ս ն եր ս ե ս Շ ն ո Ր հ ա լ ի, Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 118:

³ Նույն տեղում, էջ 125:

⁴ Տե՛ս «Նախնիք», էջ 395 (Մատենադարան, մանրապատկեր):

էջ 182, տող 7. Սա հաստատեաց զաթոռ իւր ի Սահմանս Չարեքին, ի Բարի անդ»։ Ի Բարի պետք է ուղղել ի Բարայրի։ 178 էջում ասված է. «Կաթողիկոսն Աղուանից այսր անդր յածելով, վասն ոչ ունելոյ հաստատուն տեղի աթոռոյ, դէպ եղև նոցա զալ ի քարայր մի ի սահմանս բերդին, որ կոչի Չարեք և անդ զաղարիլ (ճիշտն է դադարել) և անդուստ հովուել զհոտ իւրեանց»։

էջ 182, տող 12. «Եւ սակաւ շինել անդ եկեղեցի մեծ և հրաշալի. եւ մինչև իւր աւարտեալ, խափանումն եղև, զի եկն սուլտանն խորասանայ Ջալալադինն կոչեցեալ և եհար զթագաւորութիւնն Վրաց»։ Մինչև իւր աւարտեալ, խափանումն եղև. պետք է ուղղել մինչ չև իւր աւարտեալ, որ նշանակում է դեռևս չլի ավարտվել, խափանվեց։ Մինչև իւր աւարտեալ անիմաստ է։

էջ 187, տող 14. «Եւ զի որդի ոչ ունէր (խոսքը մեռնող Լևոն արքայի մասին է), բայց միայն զուստր մի, զոր յանձնեաց ի կաթողիկոսն և յիշխանսն ամենայն՝ թաղաւորեցուցանել զնա փոխանակ իւր և կեալ նմա հնազանդ»։ Կեալ պետք է ուղղել կալ, որ ունեն տարբերակները ևս։

էջ 201, տող 16. «Յանկարծակի յեզակարծում ժամու յուրով զունդս զօրու ծանու ամենայն կազմութեամբ ելեալ ընդ դուռն Դարբանդայ»։ «Յուրով զունդս» պետք է լինի «Ի յուրով զունդս»։

էջ 210, տող 15—17. «Եւ նորա շրջեալ գտին տեղի մի բարեկայելուչ և զոգածև առ ստորոտս երկուց լերանցն, որ կայ ի գլխոյ նորա, զոր անուանէին Էտեղին Տանձուտայ ձոր»։ Լեռանցն բառից հետո տողեր են պակասում, ընդ որում այդ պակասող տողերը վերաբերում են հոսող ջրի և լեռներից մեկին։ Լեռնիցայեն հաջորդող «Ուր կայ ի գլխոյ ճորա» նախադասութիւնը անիմաստ է. բոտ առկա վիճակի պետք է թարգմանել որ գտնվում է նրա գլխից (անմտութիւն)։ Ինչպես ասացինք, խոսքը վերաբերում է հոսող ջրի, ուստի ուր կայ առանց կասկածելու պետք է ուղղել ուր գայ, այսինքն՝ ջուրը, որ գալիս է նրա գլխից (լեռներից մեկի)։ Պակասող տողերում խոսվում է երկու լեռներից մեկի և նրա գագաթից հոսող ջրի մասին։ Այս ապացուցվում է շարունակության մեջ։ «Եւ էր ի նմա գիւղ, և ձորակ մի փոքրագոյն անցանէր ընդ մէջ նորա, և միսն ևս յորդագոյն յաշմէ կողմանէ»։ Ընդգծված մասը թարգմանվում է. մի այլ ջուր էլ ավելի հորդ աօ կողմից։ Այս նշանակում է, որ նախապես խոսել է ձախ կողմից հոսող մի ջրի մասին, որին ավելացնում է և աջից հոսող երկրորդը։

էջ 220, տող 14. «Ճեղգագոյն եկին ալիք նորա»։ Եկին պետք է ուղղել էին, ինչպես որ ունի մի ձեռագիրը։ Նշանակում է խիստ սակավ էին նրա մազերը։

էջ 224, տող 13—14. «Ջայս խորհուրդ խորհեցան ոչ Աստուծով և դաշինս կոեցին և ոչ նորա հոգւով զայս խորհուրդ խորհեցան...»։ Նախադասության շարադասութիւնը խախտված է։ Բնագիրը այդպէս է եղել, թե արտագրելիս է խառնվել, դժվար է ասել. սակայն ճիշտը այս է. «Ջայս խորհուրդ խորհեցան և դաշինս կոեցին ոչ աստուծով և ոչ նորա հոգւով զայս խորհեցան»։

էջ 227, տող 10. «Ջի այսպէս սովոր են առնել ազգս այն, որ բռնացեալ են յամուր տեղիս»։ Բռնացեալ են այստեղ բացարձակապես անմիաստ է և բերականորեն էլ սխալ։ Յամուր տեղիս ներգոյական հոլովով տեղի պարագան բռնացեալի խնդիր չի կարող լինել։ Անկասկածորեն բռնացեալ են պետք է ուղղել բռնացեալ են, որ նշանակում է բնավորված են, ժողովրդական արտահայտութեամբ՝ բնակրած են, ավելի անարգական առումով նշանակում է որջավորված են ամուր (լեռնոտ) տեղերում։

նույն էջում, տող 9. «Զի զբաղումս խոցոտեալ փոխեան»։ Ակնհայտ սխալ է վրագումս, ուղիղն է բազումք, որ ունեն տարբերակները։

էջ 234, տող 14. «Որպէս զի մի ինչ մնասցէ խոշրնդոտն գայրակղութիւն»։ Լ'նդգծված կապակցությունը պետք է ուղղել խոշընդոտն գայրակղութեան։ Խոշընդոտն և գայրակղութիւն բառերը համանիշ են և միմյանց հետ կապված են իբրև սեռականով հավելադրություն։

էջ 142, տող 16—17. «Եւ կամ ո՞րպէս զմեռեալ ի գերեզմանի եղին»։ Այստեղ՝ զո՞րպէս զմեռեալ որոշ ձեռագրերում դարձել է ուրպէս մեռեալ, իսկ մի մասում էլ վերածվել է զո մեռեալ։ Մի դեպքում զո-ն է դուրս մնացել, մյուս դեպքում՝ ուրպէս-ը։ Ճիշտն է՝ զո ուրպէս զմեռեալ։

էջ 164, տող 4—5. «Շինեցան և նոր վանորայք և եկեղեցիք, որ ի հնոցն չև։ էին լեալ վանք»։ Չեւ էին լեալ վանք նշանակում է՝ դեռևս վանք չէին, կամ դեռևս գոյութիւն չունեին իբրև վանք։ Երկու իմաստն էլ անտրամաբանական է։ Տարբնթերցվածները տալիս են ճիշտ ու տրամաբանական ձևը. չէին լեալ կամ՝ չէին լեալք, որ նշանակում է գոյութիւն չունեին։

էջ 173, տող 1. «Այլ զպատկերն զինչ օր և էր» պետք է ուղղել «Այլ զպատկեր ատուրն զինչ օր և էր»։ Պատկեր ատուր բառակապակցութիւնն է, որ նշանակում է շարաթվա կամ ամսվա օրը. ուրեմն՝ շարաթվա կամ ամսվա օրը պետք էր տոնել ոչ թե կիրակի, այլ ինչ օր որ պատահեր։

էջ 193, տող 15. «Եւ յետոյ թողեալ զմոգութիւնն ընդ նմին և զթագաւորութիւնն, կրօնաւորեալ խստակրօն վարուք, հաշտեցոյց զաստուած»։ Պետք է կետադրել «Եւ յետոյ թողեալ զմոգութիւնն, ընդ նմին և զթագաւորութիւնն, կրօնաւորեալ. խստակրօն վարուք հաշտեցոյց զԱստուած»։

էջ 201—202, տող 19—21. «Զոր ինչ գտանէին ի ճանապարհին զամենեանս սրտ ճարակ տային՝ զմարդ և զանասուն, մինչև ի շունս անգամ»։ Վերջին ընդգծված մասը աղավաղված է. նախ՝ շունս պետք է լինի զշունս. այս դեպքում մնում է ի-ն ավելորդ ու անօգնական։ Կարծում ենք, որ ի-ն իսկ բառից է մնացել։ Գրիչները մինչև բառը նախդիր են կարծել և իսկ-ը փոխվել ի-ի, այսինքն՝ դարձել է մինչև ի, որ սովորական է, իսկ մինչև ի բաղադրյալ նախդիրի խնդիրը առանց զ նախդիրի հայցական է։ Բայց մինչև-ը այստեղ շաղկապ է, որից հետո իսկ-ը սովորական է, որ այժմ էլ գործածական է մինչև իսկ ձևով, այսինքն մինչև անգամ շներին էին սրի ճարակ դարձնում։ Կարող են ասել իսկ-ը ավելորդ է, որովհետև անգամ-ը կա բնագրում։ Բայց դա ո՞ր թե սովելորդ է, այլ ավելադրութիւն է՝ զբարարի համար մի սովորական ոճական հնար։ Համեմատիր. «Եւ առհասարակ իսկ անգամ և զազդակիցս վարէին ի գերութիւն»։

էջ 215, տող 14—17. «Եւ որք տեսանէին, օրհնութիւն տային աստուծոյ. որ ետ կտնանց իմաստութիւն ոստայնականութեան և հանճար նկարակերտութեան, որպէս առ Յորն ասացաւ, որ ոչինչ ընդհատ էր ի կազմածոյ խորանին...»։ Ասացաւ բայից հետո պետք է դնել վերջակետ, որովհետև Հորի ասածը վերաբերում է վերևում ասվածին։ Հորի դրբում ասված է. «Ո՞վ ետ կանանց իմաստութիւն կամ հանճար նկարակերտութեան» (ԼԸ, 36)։ Այդ վերջակետից հետո եւ-ը ավելորդ է և այդտեղ է ընկել բնագիրը լուրջ շհասկացվելու հետևանքով. կարծվել է, թե Հորի ասածը հաջորդն է, այնինչ Գանձակեցին «առ Յորն ասացաւ» նախադասությամբ վերջացնում է նախորդը և սկսում է նոր միտք, որ

կապ ունի Աստվածաշնչի Ելից գրքի հետ: Առարկելի մասը կլինի այսպես՝ «...որպէս առ Յորն ասացաւ: Ոչինչ ընդհատ էր ի կազմածոյ խորանին»:

էջ 248, տող 2—3. «Եւ վերակացու թողին յինքնանց զի մի ալլը իուզեցեն զնոսա»։ Թաթարները խուզարկում են ժողովրդին, տեղավորում են գյուղերում և վերակացուններ են թողնում իրենցից, որպեսզի ուրիշ թաթարներ չգան և նրանց խուզարկեն: Խուզել (խուզարկել) բայը այստեղ անիմաստ է: Տարբնթերցվածները տալիս են իրունք բայը, որ նշանակում է նեղել, նեղություն տալ: Անվիճելիորեն Գանձակեցին այդ բայն է գործածել (խուեսցեն), որ բառի անծանոթության պատճառով դարձել է՝ խուզեսցեն, այսինքն՝ կատարվել է սովորական ժողովրդական ստուգաբանություն:

էջ 82, տող 16. «Եւ կամ ևս շարագունին ապականչին Յուսփայ, եղբօր Ափշնոյ» պետք է ուղղել «Եւ կամ ևս շարագոյնն ապականչին Յուսուփ եղբայր Ափշնոյ»։ Վերևում երկու տող առաջ Գանձակեցին ասում է. «Ոստիկանք շարք և անսարդիք արձակալք լինէին յաշխարհս մեր, որպէս զազանաբարոյն Բուղայ և անօրինագոյնն Ափշին» որդի յառաջագոյն եկելոյն շարագործին Ապուսեթայ»։ Այս վերջին երեք բառը, որ կիրառված են սեռական հոլովով, պատճառեն դարձել սրանց անմիջապես հաջորդող, վերևում բերված և ուղղելի կապակցության սեռականի վերածման՝ անշուշտ գրիչների կողմից, մինչդեռ այն պետք է լինի ուղղական, ինչպես որ ուղղական են զազանաբարոյն Բուղայ, անօրինագոյնն Ափշին։

էջ 90, տող 15. «Առաքեցին բնակիչք քաղաքին Անույ առ այր մի քարա-կոփ ի Սանահինն ի նոյն քաղաքէ»։ Ըստ այսմ Անի քաղաքի բնակիչները Սանահին մի սանահեցի քարակոփի մոտ մարդ են ուղարկում. մինչդեռ սանահեցի քարակոփը Անիում է, հենց սրան էլ անեցիները ուղարկում են։ Ուրեմն առ նախդիրը միայն թյուրիմացություն է առաջացնում։ Առ նախդիրը այնտեղ է դրվել բնագիրը լավ չհասկացողների կողմից։

էջ 251, տող 13. «Առաքեցէք զմեզ մի ի բերդիցս յայսցանէ, որ շուրջ կան զմեօք»։ Մի պետք է ուղղել ի մի, ինչպես ունեն մի քանի տարբերակները։

էջ 255, տող 14. «Եւ նոցա արգելեալ զբերալսն զօրէ և ոչ սպանին զոք»։ Ամենից առաջ զբերալսն պետք է ուղղել զբերեալսն, որ ունի Թիֆլիսի 1909—1910 թթ. հրատարակությունը, որովհետև զբերալսն բերականորեն անիմաստ է։ Զբերեալսն նշանակում է զնացածներին։ Եվ հետո ջուր բառի զօրէ բացատրականը կասկածելի է դարձնում դրա գոյությունը. անկարելի է, որ դասական կրթություն ստացած կիրակոս Գանձակեցին ջուր բառի հոլովման մեջ սխալ թույլ տար. պետք է լիներ զջուր. մի քանի ձեռագրեր շունեն զջուլ, մի քանիսն էլ տալիս են ի ջուր։ Բոլոր դեպքերում եթե բնագիրը ունի այդ ձևը, պետք է ուղղել՝ զջուր։ Նշենք նաև, որ այդ ձևը իմաստով արդարացնում է իր գոյությունը. նշանակում է՝ նրանք ջրի զնացածներին արդելեցին (ևս դառնալ)։

էջ 255, տող 18. «Եւ զկէսս թողին առ արանց իրեանց»։ Ճիշտն է «առ արս իրեանց»։

էջ 256, տող 12. «Մինչդեռ հեռին էիր»։ Հեռին պետք է լինի հեռի։

էջ 260, տող 16. «Եւ դեռևս կարկատեալ էին»։ Կարծում ենք, որ պետք է լինի «դեռ չեւ ևս կարկատեալ էին»։ Այս ոճը Գանձակեցին հաճախ է գործածում։ Նշանակում է՝ դեռևս չէին վերանորոգել։

էջ 269, տող 5. «Եւ նա իմաստաբար հաճեաց զմիտս նոցա»։ Իմաստաբար պետք է ուղղել իմաստնաբար։

էջ 268, տող 16. «Եւ անդէն մեռաւ, որ աստուած փառաւորեաց զփառաւորիչն իւր լոյս կամարածե կացեալ ի վերայ գերեզմանին առ ի յորդորել զայլս ի նոյն բարեգործութիւնս»: Առաջարկում ենք կացեալ ձևը ուղղել կացուցեալ, այլապէս նախադասութիւնը մնում է անհասկանալի:

էջ 284, տող 1—2. «Որոց սուր ի վերայ եղեալ կոտորեցին առ հասարակ դարս և զկանայս»: Որոց սխալ է և թյուրիմացության տեղիք է տալիս սուր ի վերայ եղեալ դերբայական դարձվածի մոտ: Պետք է ուղղել յորոց, ինչպէս որ ունեն բազմաթիվ տարբերակներ:

էջ 286, տող 12. «Ոչ ևս տալ զնա այլ ումեք իշխանին»: Իշխանին պետք է ուղղել իշխանի:

էջ 293, տող 16. «Եւ հեթանոսորեն արին ընդ արին խառնէին զազգականսն առնելով»: Առնելով պետք է ուղղել առնլով:

էջ 294, տող 18. «Գրեալ յամենայն քաղաքս, և յաւանս, և ի վանորայս երևելիս, և յիշխանս փառաւորս»: Ի վանորայս բառից հետո պետք է ստորակետ դնել, ապա գրել «և յերևելիս, և յիշխանս փառաւորս»: Ըստ բնագրի դուրս է եկել, որ թուղթ է ուղարկել երևելի վանքերին, այնինչ Գանձակեցին երևելի բառը գործածում է նշանավոր, հռչակավոր մարդիկ նշանակությամբ:

էջ 297, տող 2. «Այլ պահեաց զմեզ գրութիւն նորա՝ զմնացորդ նշխար յիշատակի, և սերմն զաւակի աճման հայկական զարմից»: Պետք է նորա բառի վրա թուր ջնջել, զմնացորդ դարձնել՝ մնացորդ, այլապէս քերականորեն սխալ է, ուստի և անհասկանալի: Որ մնացորդ նշխար կապակցութիւնը անորոշ է, ցույց է տալիս նաև հաջորդ սերմն անորոշ գործածված բառը, որ զուգահիշ է նշխար բառին:

էջ 296, տող 18. «Եւ քանզի տեառն էր պատուհասն». պետք է ուղղել՝ ի տեառն էր պատուհասն:

էջ 297, տող 6—7. «...Առ սակաւ սակաւ թափէ զտրտմութիւն մեր և փառատէ զմութ սգոյն ձեր ի դիմաց մերոց»: Զմութ սգոյն ձեր պետք է ուղղել զմութ ոգոյն մեր, ինչպէս տալիս են մի շարք ձեռագրեր:

էջ 301, տող 13. «Յիշատակ արար» պետք է լինի յիշատակարար, որ նշանակում է հիշող, շնորհագոր:

էջ 306, տող 10—12. «Եւ թէ պատուաւոր մարդ է և ընդդէմ ասէ եկեղեցւոյ որինաց լրբութեամբ թագսւորն խրատեսցէ զաւանի մեղքն. և իշխանքն՝ մեղադրանք»: Զաւանի բառի փոխարեն որոշ ձեռագրեր տալիս են յայտնի: Կարծում ենք, որ զաւանի ձևը թյուրագրութիւն է, ճիշտը պետք է լինի յատենի, այսինքրն՝ ատյանում:

էջ 323, տող 9—10. «Եւ առեալ բռնութեամբ զգերան ձիթհանացն ի տանէ իւրմէ, արարին խաչ բարձրաբերձ»: Ի տանէ իւրմէ պետք է ուղղել ի տեառնէ իւրմէ: Այսինքն՝ ձիթհանքը տիրոջից: Եթե դա լիներ ի տանէ իւրմէ, ապա չէր ասվի՝ առեալ բռնութեամբ: Եվ հետո նախորդ էջի 15-րդ տողում այդ մարդու մասին ասված է. «Ի նմա (Ծար գյուղում) էր այս այր ի շքաւորաց և ի տնանկաց, պահէր զջրաղաց նոցա և յայնմանէ կերակրէր ինքն և կին իւր և որդիք»: Պարզ է, որ այս մարդը ձիթհանք չուներ, որ իր տնից բռնի կերպով հաներ գերանը և դրանից խաչ պատրաստեր:

էջ 376, տող 16—17. «Նոքա դաշամբք հնազանդէին և պատուէին զնա, որպէս զազգակից և զհամագգի օրէնսդրին իւրեանց՝ առաջին մոլորեցուցչին իւրեանց»: Զհամագգի ձևը ցույց է տալիս, որ օրէնսդրին սխալ է, պետք է լի-

նի զօրէնսդիրն: Համապատասխանաբար առաջին մոլորեցուցչին ուղղելի է զառաջին մոլորեցուցիչն:

էջ 276, տող 4. «Ուր հայր անուանեալ էր արքային նոցա»: Ուր պետք է ուղղել զօր, որովհետև արքան է նրան հայր անվանում. ուրիշները չէին կարող նրան արքայի հայր անվանել:

էջ 277, տող 9. «Համարձակութեամբ շրջէին ընդ ամենայն աշխարհս»: Այս- խառն պետք է ուղղել աշխարհն, այսինքն՝ երկրում և ոչ թե բոլոր երկրներում:

էջ 281, տող 3. «Գայր ղնսպանս ի Ղիաթադին սուլտանէն»: Դնսպանս ակնհայտ սխալ է, պետք է լինի դեսպան: Նսխ եթե հոգնակի լիներ, պետք է սպասներ ղնսպանք ձևին և ոչ թե դեսպանս. և ապա նույն էջի 9-րդ տողում ասված է. «Եւ զայս ևս ասէր պատգամաւորն», այսինքն՝ պատգամաւորն նույն դեսպանին է ակնարկում, որ եզակի է:

Նույն էջում. «Այսպէս համարեցայր դուք աւերմամբ քաղաքի միոյ, եթէ յաղթեցաք նմա և զօրութեան նորա»: Ընդգծված մասը լրիվ աղավաղված է: Ինձ այնպես է երևում, թե միակ ձեռագրի տվյալն է ճիշտը, որ նշված է իբրև եզակի տարբերակ: Նսխ անառարկելի է, որ յաղթեցաք պետք է լինի յաղթեցիք, որ միայն այդ ձեռագիրը ունի: Եվ հետո հիշյալ ձեռագիրը յունի նմա և բառերը, որ ավելորդ են, իսկ նորա ձևի փոխարեն ունի իմոյ: Ուրեմն ճիշտ պետք է համարել՝ յաղթեցիք զօրութեան իմոյ: Ամբողջի պարզ ու ճշգրիտ թարգմանությունն է. Դուք մի քաղաքի ավերումով այնպես կտրծեցիք, թե հաղթեցիք իմ զորությանը:

էջ 287, տող 4—5. «Կամեցաւ թիկունս օգնականութեան իւր առնել զուղիւն Հնքմոյ՝ զԿոստանդին համանուն իւր, զորդին Հնքմոյ՝ զաներն իւր»: Առաջին զուղիւն Հնքմոյ թյուրիմացաբար կրկնված է. պետք է հանել: Ընդհանուր հասկա- նային է. «Կամեցաւ թիկունս օգնականութեան իւր առնել զԿոստանդին համա- նուն իւր՝ զորդին Հնքմոյ՝ զաներ իւր»:

էջ 319, տող 8. «Եւ զօրածողով են զնալ կոտորել»: Պետք է ուղղել «Եւ զօ- րածողով լեալ զայ կոտորել», ինչպես տալիս են որոշ ձեռագրեր:

էջ 379, տող 6—8. «Ընկեցին ցանցս ամուրս հանդերձ երկաթի կոսք և շամփօք ի մէջ դետոյն և յատակսն, զի մի որ լողալով զերծանիցի. և հետի ի քաղաքէն»: Ամենից առաջ կոսք ձևի դիմաց ճիշտն է կեոսք: Իսկ հետի ձևը այդ- տեղ բոլորովին անիմաստ է: Անհրաժեշտ է զերծանիցի բայից հետո միջակետը ջնշել, իսկ հետի ուղղել նեոասցի, որի մեացորդէ է հետի:

էջ 381, տող 10. «Եւ յետ շուրս ատուրն»: Պետք է ուղղել կամ յետ շուրից ատուրցն, կամ յետ շուրուղ ատուրն:

էջ 383, տող 11—12. «Եւ զամենաւնն կացեալ էր ի թագաւորութեանն. իբրև անյազ տգրուկ կլեալ զամենայն տիեզերս: Եւ այժմ ի բաց փոխեաց»: Այս տողերում նկատում ենք աղավաղում, իսկ եթե չկա այդպիսին, ապա զամե- նայնն (սկզբի) ձևը գոնե պետք է լինի ամենայնն, իսկ իբր (ճիշտը՝ իբրև) բա- ոից առաջ կարելի է ենթադրել որոյ ձևը: Տիեզերս բառից հետո վերականոտի փոխարեն ստորակետ դնել և ամենակարևորը՝ փոխեաց բառը փոխեաց-ի վե- րածելն է, որ հավանորեն վրիպակով է փոխեաց դարձել:

ТЕКСТОЛОГИЧЕСКИЕ ИСПРАВЛЕНИЯ В «ИСТОРИИ
АРМЕНИИ» КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ

Доктор филол. наук В. Д. АРАКЕЛЯН

(Резюме)

Во многих произведениях армянских историографов не редки случаи различных изменений и искажений. Армянские филологи долго занимались уточнением и исправлением этих искажений, из которых многие были окончательно устранены.

В статье автор, анализируя рукописные варианты и грамматико-языковые данные труда Киракоса Гандзакеци «История Армении», исправляет ряд ошибок и искажений, появившихся в результате неоднократных переписок и редакций этого труда.